Հ.Հ. Արմավիր մարզի
Վանանդի համայնքապետարանի

2018 թ. տարեկան հաշվետվությունը

համայնքի բնակիչների 25.01.2018թ.
կայացած ընդհանուր ժողովում

## Համառոտ ծանոթություն առ 01.01.2018թ. դրությամբ

1. Տնտեսությունների թիվ --- 218

   Բնակչության թիվ --- 1187

   որից տղամարդ --- 631

   կին --- 556

2. Թոշակառուներ --- 79

3. Նպաստառուներ --- 33

4. Դպրոցի երեխաներ --- 171

5. Ուսուցիչներ --- 22

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման » մասին օրենքով և Արմավիրի մարզպետարանի ամենօրյա օժանդակությամբ 2017թ. տնտեսական տարին սկսեցինք ավագանու կողմից ընդունված ծրագրերի համապատասխան:

2017թ. համայնքում կայացել է մեկ ընդհանուր ժողով, որտեղ քննարկվել է համայնքապետարանի 2017թ. կատարած աշխատանքների արդյունքները:

Հաշվետու տարում կայացել է ավագանու 9 նիստ: Հիմնականում քննարկվել են 2017թ. համայնքի բյուջեի ընդունման, հաստատման և այն կատարելու հարցերը:

Ավագանու նիստերում քննարկվել են համայնքի սոցիալական այլ ոլորտի հարցեր:

Գյուղապետի կողմից ընդունվել է համայնքին առնչվող 43 որոշում, 5 կարգադրություն:

Համայնքապետարանի և ավագանու ուշադրության կենտրոնում են եղել համայնքի բնակիչների կողմից բարձրացված հարցերը և Արմավիրի մարզպետարանի կողմից տրված հանձնարարականների կատարումը:

2017թ. ընթացքում համայնքապետարանը ստացել է տարբեր բնույթի դիմումներ, որոնց տրվել է սպառիչ և օրինական ընթացք: Արմավիրի մարզպետարանից և այլ կազմակերպությունների կողմից ստացվել են 172 տարբեր բնույթի պաշտոնական գրություններ: Նշված գրությունները օրինական կարգով մուտքագրվել են, և ժամանակին տրվել է օրինական ընթացք: Համայնքապետարանի կողմից տարբեր կազմակերպությունների է ուղարկվել 177 գրություններ: Բնակիչների պահանջով տրվել են տարբեր բնույթի 104 տեղեկանքներ:

2017 թվականի ընթացքում հիմնանորոգել ենք համայնքի խմելաջրի ներտնտեսային ցանցի ջրագիծը և կատարել ենք ջրագծի ընթացիկ նորոգումներ:

Համայնքի հուզող և հրատապ հարցերից է համայնքի 4կմ երկարությամբ ոռոգման ցանցի հիմնանորոգումը, ինչպես նաև ակումբի կառուցումը:

Համոզված եմ, որ 2018 թվականի ընթացքում հիմնովին կլուծենք վերը նշված խնդիրները:

Նշված դրական աշխատանքների կողքին, համայնքապետարանը ունի նաև թերություններ: Մեծ աշխատանք պետք է կատարվի նաև փողոցների ասֆալտապատման, կանաչապատման և ակումբի շինարարության գործում:

Իսկ այդ աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է նաև որ համայնքի բնակիչները ևս կատարեն իրենց պարտականությունները: Մինչև օրս կան շատ սեփականատերեր և վարձակալներ, ովքեր չեն կատարել իրենց հարկային պարտականությունները: Ուստի օգտվելով առիթից կոչ եմ անում բոլոր ներկաներին, վճարել հողերի հարկերն ու վարձավճարները, որպեսզի համայնքապետարանը կարողանա ավելի շատ ծրագրեր կյանքի կոչի:

Հարգելի համագյուղացիներ Ձեզ եմ ներկայացնում համայնքի 2017թ. տարեկան բյուջեի կատարման պլան-կատարողականը:

# Արմավիրի մարզի Վանանդ համայնքի 2017թ. տարեկան բյուջեի եկամուտների կատարման հաշվետվություն

| N | Եկամուտի անվանումը | Պլան | կատարողական | կատարման % |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 16925.2 | 18578.9 | 110% |
| 2 | Գույքահարկ | 1301.4 | 1562.4 | 120% |
| 3 | Վարձավճար հողի | 642.5 | 451.9 | 71% |
| 4 | Տեղական տուրք | 24.0 | 123.4 | 514% |
| 5 | Դոտացիա | 8339.7 | 8339.7 | 100 % |
| 6 | Տեղական վճարներ աղբահանություն | 840.0 | 155.4 | 18.5% |
| 7 | Օրենքով այլ վճարներ | 1600.0 | 463.3 | 30% |
| | Ընդամենը | 29621.4 | 29623.0 | 100% |

Իհարկե այդ ցուցանիշները մարզի կտրվածքով դրական են, սակայն մեր համար գոհացուցիչ չեն, և ես հույս ունեմ որ 2018թ. տնտեսական տարում կանենք ամեն ինչ, որպեսզի այս ցուցանիշները բարձրանան և նոր սոցիալական ծրագրեր իրականացվեն:

Վանանդի համայնքապետ՝ Ջ.Մանուկյան

քարտուղար՝ Ա.Դալալոյան

# Արմավիրի մարզի Վանանդ Համայնքի 2017թ
# տարեկան
# բյուջեի ծախսերի կատարման հաշվետվություն

| Հ/Հ | Ծախսերի անվանումը | 2017. պլան | Կատարողական | Կատարման % | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ընդամենը վարչական բյուջե | 29621.4 | 29621.4 | 100 | |
| 2 | Օրենսդիր և գործադիր մարմ. | 19648.5 | 19648.5 | 100 | |
| 3 | Աղբահանում | 2600.0 | 2600.0 | 100 | |
| 4 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն | 80.0 | 80.0 | 100 | |
| 5 | գյուղատնտեսություն | 219.4 | 219.4 | 100 | |
| 6 | Ընդհանուր բնույթի հանր. ծառ. | 325.0 | 325.0 | 100 | |
| 7 | Ջրամատակարարում | 3654.1 | 3654.0 | 99.9 | |
| 8 | Փողոցների լուսավորություն | 218.3 | 218.3 | 100 | |
| 9 | Կրթություն նախադպրոցական | 1917.0 | 1917.0 | 100 | |
| 10 | Մշակույթ գրադարան | 959.1 | 959.1 | 100 | |

| Հ/Հ | Ծախսերի անվանումը | 2017 պլան | Կատարողական | Կատարման % | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ֆոնդային բյուջե | 40528.8 | 35913.7 | 88.6 | |
| 2 | Օրենսդիր և գործադիր մարմ. | 1850.0 | 1105.0 | 59.7 | |
| 3 | Բնակարանային շինարարություն | 18890.0 | 18890.0 | 100 | |
| 4 | Փողոցների լուսավորություն | 370.0 | 370.0 | 100 | |
| 3 | Ջրամատակարարում | 950.0 | - | - | |
| 4 | Տրանսպորտ (ճանապ.) | 7975.4 | - | - | |

Վանանդի համայնքապետ՝ Ջ.Մանուկյան

գլխ.մասնագետ՝ Լ.Աղաջանյան